

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի մայիսի 3-ի ՀՕ-88-Ն օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի «կրկնապատիկի չափով» բառերը փոխարինել «ինգապատիկի չափով» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Անհրաժեշտությունը՝ Վերջին տարիներին տնտեսական ճգնաժամի հետևանքով զգալիորեն աճել է բնափայտի, այդ թվում վառելափայտի պահանջարկը, որը հիմնականում պայմանավորված է բնակչության ծանր սոցիալական վիճակով: Հատումները հիմնականում իրականացվում են բնակավայրերին հարակից անտառներում՝ բերելով դրանց խոցելիության բարձրացմանը:

Մյուս կողմից, առևտրի նպատակներով իրականացվող ապօրինի հատումների ընթացքում շինափայտ ստանալու համար մթերվում են տնտեսապես առավել արժեքավոր ծառատեսակներ՝ վտանգելով անտառների որակական հատկանիշները:

Անտառօգտագործումը ներկայումս համաձայն տարբեր փորձագիտական գնահատականների գերազանցում է նախատեսված չափաքանակները՝ բացասաբար անրադառնալով անտառների արտադրողականության վրա:

Ելնելով վերը նշվածից և ապօրինի փայտանյութի տեղափոխումը կանխելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում՝ ապօրինի մթերման փայտանյութը և դրանից արտադրված արտադրատեսակներն անտառից դուրս ընկած տարածքներում կամ տեղափոխման ժամանակ հայտնաբերելու դեպքում վնասի հատուցման չափը կրկնապատիկի փոխարեն սահմանել հնգապատիկի չափով:

Ընթացիկ վիճակը և խնդիրները՝ Չնայած վերջին տարիներին արձանագրված ապօրինի հատված ծառերի քանակի բազմակի անգամ նվազմանը՝ ապօրինի ատառօգտագործումների դեմ պայքարը հանդիսանում է անտառային համակարգի գլխավոր խնդիրը:

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ կետում նախատեսվում է՝ «Ապօրինի մթերված փայտանյութը և դրանցից արտադրված արտադրատեսակներն անտառից դուրս ընկած տարածքներում կամ տեղափոխման ժամանակ հայտնաբերելու դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է ՀՀ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառի կառավարման լիազոր մարմնի կոմից ծառի համապատասխան տեսակների

ներքևի պահեստից բացթողնման և փայտանյութի վերամշակումից ստացվող արտադրատեսակների համար սահմանված գների կրկնապատիկի չափով): Մինչդեռ, նույն հոդվածի 10-րդ կետի համաձայն ապօրինի հատումների փաստը անտառում հայտնաբերելու դեպքում, վնասի հատուցման չափը հաշվարկվում է վերոնշյալ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի ա/ և բ/ ենթակետերում սահմանված սակագների եռապատիկի չափով՝ կապված ծառի /կոճղի/ համապատասխան տեսակի տրամագծից, որը մի քանի անգամ բարձր է, քան անտառից դուրս ապօրինի ձեռք բերված անտառանյութի վնասի հատուցման սակագինը:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը չի նախատեսում գործող քաղաքականության փոփոխություն: Այն նպատակաուղղված է ՀՀ անտառների կայուն կառավարմանը՝ պահպանությանը և ապօրինի հատումների դեմ պայքարին:

Կարգավորման նպատակը և բնույթը՝ Նախաձի ընդունումը նպատակ ունի կարգավորել անտառից դուրս գտնվող տարածքներում կամ տեղափոխման ժամանակ հայտնաբերված ապօրինի մթերված փայտանյութի և դրանից արտադրված արտադրատեսակների վնասի հատուցման սակագների գումարային տարբերությունը անտառում հայտնաբերված ապօրինի հատումների հետևանքով պատճառված վնասի հատուցման սակագներից, արդյունքում հաշվարկի կրկնապատիկ չափը փոխարինվում է հնգապատիկով:

Նախագծի մշակման հորձընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

Ակնկալվող արդյունքը՝ Ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և բացասական այլ գործողությունների կանխարգելումը և նվազեցումը:

Իրավական ակտի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին՝ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը տեղադրված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ինտերնետային կայքում՝ <http://www.minagro.am/> հասցեով, հասարակությանն իրազեկելու նպատակով:

Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը՝ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տեղեկանք

«Բնապահպանական իրավախախտումների հետեվանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

Տեղեկանք

«Բնապահպանական իրավախախտումների հետեվանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական նվազեցում չի առաջանում: